Մոտեցեք մարդկանց,
Սովորեք նրանցից,
Սիրեք նրանց,
Սկսեք նրանից, ինչ նրանք ունեն,
Կառուցեք նրանց ունեցածի վրա:
Բայց լավագույն առաջնորդները նա է,
Որ երբ իր խնդիրը լուծված է,
Իր գործն՝ արված,
Մարդիկ կասեն.
՝Մենք ինքներս արեցինք՝:

*2000-ամյա չինական բանաստեղծություն*
*Լաո Ցու*

Մարդիկ կը յարգեն ձեզ, երբ դուք լինէք պարզապէս այնպիսին, ինչպիսին կաք եւ բաւարարուէք դրանով, եւ ոչ թէ համեմատուէք կամ մրցակցէք:

*Լաո Ցու*

Լաւ կառաւարուող երկրում աղքատութիւնն  է ամօթալի,
վատ կառաւարուող երկրում՝ հարստութիւնը:

*Կոնֆուցիուս*

Պետութեան ուժը գալիս է ընտանիքի ամբողջականութիւնից:

*Կոնֆուցիուս*

Ճաքճքած ադամանդն աւելի գերադասելի է , քան հարթ խճաքարը:

*Կոնֆուցիուս*

Ընտրէք ձեր սիրած գործը եւ ձեր ողջ կեանքում երբէք ստիպուած չէք լինի աշխատել:

*Կոնֆուցիուս*

Ուր էլ որ գնաք, սրտով գնացէք:

*Կոնֆուցիուս*

8-րդ

Գերագոյն բարիքը ջրի նման է,
որը միամիտ (անշահախնդիր) սնում է ամէն ինչ
Գոհ է այն խոնարհ (բացառիկ) տեղերում, որոնք ուրիշները արհամարհում են,
Ուրեմն, Դաո-ի (Ճանապարհի) նման է:

Ապրելիս, ապրէք գետնին մօտ:
Խորհելիս, պարզ եղէք:
Պայքարելիս արդար եւ մեծահոգի եղէք:
Կառավարելիս մի ճնշէք:
Աշխատելիս, սրտով գործ արէք:
Ընտանիքի մէջ, լրիւ նուիրուած եղէք:

Մարդիկ կը յարգեն ձեզ, երբ դուք լինէք պարզապէս այնպիսին,
ինչպիսին կաք եւ բաւարարուէք դրանով, եւ ոչ թէ համեմատուէք կամ
մրցակցէք:

66-րդ

Բոլոր առուները լցւում են ծովը,
քանզի ծովը դրանցից ցածր է:
Նրա հզօրութիւնը բխում է իր խոնարհութիւնից:

Եթէ ձգտում ես ժողովրդին կառավարել,
պիտի խոնարհուես իր առաջ:
Եթէ ձգտում ես նրան առաջնորդել
պիտի սովորես նրան հետեւել:

Վարպետը ժողովրդից բարձր է,
սակայն ոչ ոք դրանից չի ճնշւում:
Նա ժողովրդից առաջ է ընկնում
սակայն ոչ ոք դրանից չի նեղւում:

Բոլորն էլ երախտապարտ են նրան,
քանզի նա ոչ մէկի հետ չի մրցակցում,

ոչ ոք չի կարող նրա հետ մրցել:

75-րդ

Երբ հարկերը շատ ծանր լինեն,
ժողովուրդը սոված կը մնայ:
Երբ պետութիւնը շատ միջամտի ժողովրդի կեանքին,
ժողովուրդն իր ոգին կը կորցնի:

Աշխատէք մարդկանց օգտին,
Վստահէք եւ հանգիստ թողէք նրանց:

*Տաոյ Տէ Ճինգ Լաօ Ծը*